ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 160-Ա « 01 » 04 2026թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

2026-04-01 12:18:24 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ԲԱԲԱՅԱՆ

Նախագահին փոխարինող

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի

2026 թվականի ապրիլի 1-ի № 160 - Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Պետական բաժնեմասի կառավարման վարչության պետական մասնակցությամբ ընկերությունների կառավարման և մոնիտորինգի բաժնի (այսուհետ՝ Բաժին)՝ աշխատանքային ծավալի կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝ Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող գործառույթների (մասնավորապես՝ բաժնետիրական ընկերությունների կառավարմանն առնչվող գործառույթներ (տարեկան և արտահերթ ժողովների կազմակերպում, ընկերությունների գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթի բաշխման աշխատանքների մասնակցություն և պետական բաժնեմասի դիմաց շահաբաժինների վճարման աշխատանքների կատարման ապահովում), 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն, կազմակերությունների գործունեության արդյունավետության որոշում, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքի գնահատում, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու աշխատանքներ և այլն) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ իրավագիտության բնագավառներում երեք տարվա աշխատանքային ստաժ,

2) «ՀՀ Սահմանադրություն, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, «Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Պետական գույքի կառավարման մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Պետական գույքի 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1262-Ն, ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի հանրապետության պետական մասնակցությամբ ընկերությունների և մինորիտար մասնակցությամբ ընկերությունների սեփականության քաղաքականության մասին» թիվ

1617-Ն ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 30-Լ հրամանի անհրաժեշտ իմացություն,

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,
4) գրավոր և բանավոր հաղորդակցության հմտություն,
5) ներկայացուցչական և կազմակերպչական հմտություններ,
6) հայերենի գերազանց իմացություն,
7) օտար լեզվի իմացություն,
8) փաստաթղթերի նախապատրաստման հմտություն,
9) արագ կողմնորոշվելու ունակություն,
10) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական արդյունքների վերլուծության հիման վրա դրանց վերակազմակերպման, բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման, գույքի վարձակալության տրամադրման, օտարման, ինչպես նաև մասնավորեցման, մասնավորեցման ձևի ընտրության կամ լուծարման վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում,

բ. առևտրային կազմակերպություններում խորհուրդների ձևավորման աշխատանքներին (անհրաժեշտության դեպքում) մասնակցություն,

գ. տարեկան և արտահերթ ժողովների հրավիրման աշխատանքների կազմակերպում,

դ. Կոմիտեի նախագահին տնօրենների հետ աշխատանքային պայմանագրեր կնքելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

ե. առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի փոփոխությունների և գրանցման հետ կապված աշխատանքների կազմակերպում,

զ. բաժնետոմսերի հանձնման-ընդունման, մասնագիտացված կազմակերպություններում բաժնետոմսերի գրանցման աշխատանքների կազմակերպում և իրականացում,

է. առևտրային կազմակերպությունների ֆինանսական և այլ հաշվետվությունների ընդունումն ու ամփոփման աշխատանքների իրականացում,

ը. ընկերությունների գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթի բաշխման և պետական բաժնեմասի դիմաց շահաբաժինների վճարմանը հետևելու աշխատանքներին մասնակցում,

թ. պետական կառավարման լիազոր մարմինների հետ համատեղ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկում և վերլուծություն,

ժ. ֆինանսատնտեսական մոնիտորինգի արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու համար վերլուծական տեղեկանքների նախապատրաստում,

ժա. ֆինանսատնտեսական մոնիտորինգի արդյունքների վերլուծության հիման վրա պետական կառավարման մարմիններ առևտրային կազմակերպությունների պետական բաժնետոմսերի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ, առաջարկությունների ներկայացում,

ժբ. պետական կառավարման մարմինների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու, գնահատված արդյունքների հիման վրա խրախուսման կամ պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

ժգ. իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ, ինչպես նաև Կոմիտեի նախագահի, տեղակալների և գլխավոր քարտուղարի այլ հանձնարարականների իրականացնում,

ժդ. իրավաբանական անձանց, քաղաքացիների խնդիրների ուսումնասիրում, քննարկում և համապատասխան առաջարկությունների ներկայացում,

ժզ. Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները

Փորձագետը երեք ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա.»-«ժզ.» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական արդյունքների վերլուծության հիման վրա դրանց վերակազմակերպման, բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման, գույքի վարձակալության տրամադրման, օտարման,

ինչպես նաև մասնավորեցման, մասնավորեցման ձևի ընտրության կամ լուծարման վերաբերյալ համապատասխան առաջարկությունները ներկայացվել է,

բ. առևտրային կազմակերպություններում խորհուրդների ձևավորման աշխատանքներին (անհրաժեշտության դեպքում) մասնակցել է,

գ. տարեկան և արտահերթ ժողովների հրավիրման աշխատանքները կազմակերպել է,

դ. Կոմիտեի նախագահին տնօրենների հետ աշխատանքային պայմանագրեր կնքելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացրել է,

ե. առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի փոփոխությունների և գրանցման հետ կապված աշխատանքները կազմակերպել է,

զ. բաժնետոմսերի հանձնման-ընդունման, մասնագիտացված կազմակերպություններում բաժնետոմսերի գրանցման աշխատանքների կազմակերպել և իրականացրել է,

է. առևտրային կազմակերպությունների ֆինանսական և այլ հաշվետվությունների ընդունումն ու ամփոփման աշխատանքներն իրականացրել է,

ը. ընկերությունների գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթի բաշխման և պետական բաժնեմասի դիմաց շահաբաժինների վճարմանը հետևելու աշխատանքներին մասնակցել է,

թ. պետական կառավարման լիազոր մարմինների հետ համատեղ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակը դիտարկումների և վերլուծության աշխատանքներն իրականացրել է,

ժ. ֆինանսատնտեսական մոնիտորինգի արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու համար վերլուծական տեղեկանքները նախապատրաստել է,

ժա. ֆինանսատնտեսական մոնիտորինգի արդյունքների վերլուծության հիման վրա պետական կառավարման մարմիններ առևտրային կազմակերպությունների պետական բաժնետոմսերի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ, առաջարկությունները ներկայացրել է,

ժբ. պետական կառավարման մարմինների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու, գնահատված արդյունքների հիման վրա խրախուսման կամ պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ առաջարկությունները ներկայացրել է,

ժգ. իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ, ինչպես նաև Կոմիտեի նախագահի, տեղակալների և գլխավոր քարտուղարի այլ հանձնարարականներն իրականացրել է,

ժդ. իրավաբանական անձանց, քաղաքացիների խնդիրներն ուսումնասիրել, քննարկել և համապատասխան առաջարկությունները ներկայացրել է,

ժզ. Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներն իրականացրել է :